

ենք դարձնում: բիծ ենք դնում նորա հոգեւոր կեանքի մարրութեան և անմեղութեան վերայ:

Իւրաքանչիւր իսկական ծանաչողութեան միակ հաստատուն հիմքն է՝ առարկաների անմիջական գիտողութիւնը: սեպհական փորձը և երեոյթներին անձամբ ներկայ գտնուելը: Փորձից բղխում է գիտութիւն: որ բմբունման և գիտողութեան միջոցաւ առաջնորդում է դէպի օրէնք ու կանոն: իսկ այդ տեղից դէպի ակներև ճշմարտութիւն և սկզբունք: Այս է դէպի գիտական ծանաչողութիւն առաջնորդող ծանապարհը:

Աշակերտի ուշադրութիւնը դէպի բառերը թուեացնում է նորա ուշադրութիւնը դէպի զաւարտները: հետեւապէս և նոցա հասկանալու ձրգտումը: մինչդեռ ուսուցման բուն նպատակը վերջինս է:

Ոչ մի բան այնպէս չի ճնշում հոգու բարձր կարողութիւնները և այնպէս թեւակտուր չի անում: որչափ յիշողութեան ծանրաբեռնումը: նիւթի մեծ պաշար բառացի կերպով անգիր սերտելը: այդ անպէտք զանգուածը յիշողութեան մէջ պահելու պարտաւորութեամբ լինելը:

(Կր շարունակուի):

ՍՈՒՐ ՄՏՔԵՐ.

Թշնամիների դէմ տածած ատելութիւնը նոցա աւելի քիչ է վնասում քան մեզ:

Ամենաբաղդաւորը նա է: որ առանց յաղղի էլ բաղդաւոր է:

Միայնութիւնն աշխատողի համար բարիք է: անգործի համար չարիք:

Շատ տէրեր բռնակալ չէին լինի: եթէ նոցա հպատակները ստրուկներ չլինէին:

Կոպիտը սիրում է ճշմարտութեան դրօշակի տակ ծածկուել:

Խելօք մարդը թողնում է: որ կինը վերջին խօսքն ասէ: բայց գործի մէջ տղամարդ է մնում:

Ինչ որ մեծերի համար փառասիրութիւն է: սնափառութիւն է փոքրերի համար:

Բարերարի մահուան համար աւելի ախտաւոր է: քան ցաւում:

Այն մարդիկ: որոնց կարելի է մատին փաթածել՝ յաճախ աւելի վտանգաւոր են քան կարծուում է: կարելի չի լինում նոցա կրկին յետանել:

Խելօքը հիանում է միայն այն բանի վերայ ինչ որ հասկանում է: յիմարն այն բանի՝ ինչ որ չի հասկանում:

Գեղեցիկ բան է սեփական աշխատութեամբ բաղդ ձեռք բերելը: ևս առաւել գովելի՝ անբաղդութեան դիմանալը:

Բաւական է: որ ապերախտ չեն գտնուել դէպի քեզ՝ կարող ևս ասել: թէ երախտադէտ են եղել:

Սրիկային ցոյց տուած գութը գողութիւն է պատուաւոր մարդկութեան նկատմամբ:

Խիղճը բարւոյ օրէնքն է: օրէնքը վատութեան խիղճը:

Յաճախ ստուերից ենք իմանում: որ մօտիկ մի տեղ լոյս կայ:

Ամենափառմար բռնակալը երես տուած երկնիւն է:

Երբեմն կոյր լինելն ամենալաւ տեսողութիւնն է: սխալն է երբեմն մեր ամենամեծ բաղդի պատճառը:



ԳՐԱԽՅՈՒՄԻՒՆ.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ: Զօն Ստիւարտ Միլլի: Թարգմ: Ա. Կ.: Հրատարակութիւն Մ. Գ. Ը.: Մոսկուա: 1898 թ.: գինն է 1 ռ. 50 կ.

Այս գտտական գրութեան թարգմանիչը տաւում է. «Ո՛ր նկատի ունենալով: որ մեր զրականութեան մէջ պակասում են այնպիսի հրատարակութիւնների: որոնք կարողանային զարգացնել մեր հասարակութեան մէջ զիտակցական ու քննական վերաբերութիւն դէպի մարդկային կեանքի այլ և այլ հասարակական երկոյթները և տարածելն մեր մէջ հիմնաւոր կերպով բացատրուած հասկացողութիւններ... — մենք ձեռնարկեցինք հրատարակել այդ ուղղութեամբ մի քանի գրքեր... Հրատարակութիւնների շարքը սկսվում է Զօն Ստիւարտ Միլլի Ազատութեան մասին: տրակտատի և պ. Տ. Աւետիքեանի «Իրանդիայի դատը»

գրուածքի տպագրութեամբ: Պատրաստուած են և ի նկատի կան հրատարակութեան համար նաև հետեւեալ գրուածքները. Զ. Ս. Միլ— Կանանց ստորագրութեան մասին. Տօկվիլ— Հին կարգ. Վոլտեր— Կանգիդա —

Ինչպէս տեսնում ենք ընտրութիւնը և ձեռնարկութեան նպատակը ըստ ամենայնի արժանի է գովութեան, բայց թարգմանիչը իւր ձեռնարկութեան համար «հրաւիրում է մեր ընթերցող հասարակութեան բարեհաճ... անշակցութիւնը»:

Թող ներէ նա մեզ, մենք խորհուրդ չենք տայ անշակցել մանաւանդ դասական գրքերի այնպիսի թարգմանութեան, որի զարհուրելի օրինակը մեր առջեւ է:

Բաց արեք այս դասական թարգմանութեան առաջին պատահած երեսը և փորձեցէք ձեր բոլոր սրամտութեամբ մօտաւորապէս հասկանալ, թէ ինչ է կամեցել ասել Պարոնը իւր քրտնաթոր աշխատութեամբ, զոր օրհնակեալը «Ձեռն գտնուի երկու այնպիսի դարեր և հազիւ թէ գտնուին երկու այնպիսի երկիրներ, որոնք զձեռք լինէին այս հարցը միատեսակ: Այդ դեռ բաւական չէ, մի դարի վճիռը սովորաբար դառնում է զարմանքի առարկայ միւս դարի համար և նմանապէս մի երկրի վճիռը՝ միւսի համար: (Այս դեռ Աստծու օրհնութիւն էր, դուք շարունակութիւնը լսեցէ՛ք...) Այն ինչ եթէ մենք կանգ առնենք որոշ շրջանի և երկրի մարդկանց յարաբերութեան վերայ դէպի այս հարցը, ապա մենք կը նկատենք, որ այդ հարցը զձեռք նրանց համար այնքան քիչ դժուարութիւններ էր ներկայացնում, որ կարծես թէ նա հարց էլ չէր, այլ միանգամ ընդ միշտ մարդկութիւնից զձեռք մի բան: Նրանց մէջ տիրապետող կանոնները թրւում էին նրանց անկասկածելի և անխոյտնի ինքն ըստ ինքեան. այս համարեա ընդհանուր ցնորքը ներկայացնում է սովորութեան մոգական ազդեցութիւն ունենալու այն օրինակներից մէկը, որը ոչ միայն ինչպէս ասում է առածը, երկրորդ բնութիւն է, այլ մշտապէս սխալ կերպով ընդունւում է իրրեւ առաջին բնութիւն: Սովորութեան ազդեցութիւնը հեռացնում է մարդկանցից ամեն մի կասկած վարուեցողութեան տիրապետող կանոնների անփո-

փոխելութեան մասին և այս ազդեցութիւնը ևս առաւել զօրեղ է նրանով, որ մարդիկ սովորաբար կարիք չեն զգում որ և է ապացոյցի այդ կանոնների ճշմարտութեան մէջ համոզուելու կամ ուրիշների առաջ արդարացնելու: Այն բաներում որոնց սովորաբար վերաբերում են այս կանոնները, մեր սեփական զգացմունքների վրակայութիւնը փոխարինում է ամեն տեսակ ապացոյց և դարձնում է բոլոր ապացոյցները անօգուտ—այսպէս է ընդհանրացած կարծիքը, որը պաշտպանում են նոյն իսկ այնպիսի մարդիկ, որոնք փիլիսոփայ կոչուելու յատկանութիւն ունին»:

Ով որ այս բառերի դէպերից մի դանդի չափ իմաստ կարող է քաղել, նա պարտաւոր է... անշակցել մեր Պարոնի ձեռնարկութեան, որ նորահետի միասին՝ անթառամ պսակի արժանանայ—մեր գրականութիւնը չինքնէնով ճոխացնելու պատուի համար:

Իսկ մեր համեստ կարծիքն այն է, որ Միլի Ազատութեան մասին» պատուական զիրքը պէտք է նոր ինորոյ թարգմանութեան միւս խոստացած նոյնպէս պատուական գրքերի թարգմանութիւնը աւելի ձեռնհաս գրչով կատարուի:

Մենք այսպէս խիստ խօսեցինք, որպէս զի հրատարակիչների գեղեցիկ դիտաւորութիւնը (մինչև իսկ թուղթն ու տպագրութիւնը) քամուն տուած չլինին: Եւ թող նոքա համոզուած լինին, թէ մեր արեւելեան բարբառի վիճակը այդքան էլ յուսահատական չէ:

Ս. Մ



ՄԿԲՏԻՉ ԷՄԻՆԵ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան մասին. հայկաբանի մի պատկերով և կենսագրութեան նիւթերով. Էմինեան Ազգագրական հրատարակութիւնների IV հատոր, խմբագրութեամբ Գր. Խաչատրեանցի. 1898 թ., Մոսկուա:

Յարիք չկայ Մկրտիչ Էմինի երկասիրութեանց հրատարակութեան մեծ նշանակութիւնը ներբողելու, երբ որ նա իւր գլուխ գործոց—Աէպք հնոյն Հայաստանի—1850 թ. տպագրեց, այս խօսքով